թիւնը մարտ 18էն վերջը ընդդիմութեանց համար. զօրաւոր տարերք մը՝ որ կրցաւ դիմանալ երկու ամիս պատերազմի և եօթն օր ճակատամարտի 'ի Բարիզ։ 1047 կտոր հրանօթ ունէր, քան և եօթը տեսակ, զորս ամէն անգամ չկրցաւ օգտակար ընել պաշարուց բաշխուելուն խառնակութեան համար։ Դուրս հանելով թէ յառաջապահին, թէ բերդերուն և թէ պարըսպորմից մէջ գործածուած հրանօթքը, երբ օրինաւոր գունդերը Բարիզ մտան 726 հրանօթք փողոցները պաշտպանելու համար գործածուեր էին։ Հեծելազօրն աննշան էր և երբեք 449էն աւելի ձի չունեցան։ Ընդհանրական հետևակը բազմաթիւ էր։ Քսան լեգէոնք, կազմեալ 254 վաշտերէ, կը բաժնուէին 'ի գործօղ և 'ի պահպանող խումբս։ Առաջին մասին մէջ կային 3649 սպայք և 76,081 զինուորք. երկրորդ մասին մէջ 106, 909 անձինք, որոց կը հրամայէին 4284 սպայք, որով ընդ ամէնը կ'առաւելուր 191,000 թիւը. ուսկից պէտք է հանել 30,000ի չափ անձինք, որոնք կրցան միշտ յաջողիլ ծառայութենէ փախուստ տալու։ Ընդ ամէնը՝ Հասարակապետութիւնը ունեցաւ 140,000էն մինչև 150,000 կռուողներ, զորս ինքը վարեց թէ 'ի ներքս և թէ արտաքոյ Բարիզու։

Այս բազմութեան վրայ պէտք է աւելցընել 28 ազատ գունդեր ալ, ազատագնացք, գործողք վայրկենական ազդեցութեան համեմատ, և ոչ ումեք հնազանդողք։ Իրենց յարափոխ թիւը մայիսի կէսին վերջերը կը հասնէր 10,820ի՝ հրամայեալք 310 սպաներէ։ Ամէն տեսակ և ամէն կարգի մարդիկ կային մէջերնին, որոնք տարօրինակ անուանակոչութիւններ կ'ընտրէին. Թուրքոսք Հասարակապետութեան. Լըտեսք Գէրժըրէի, Մանկունք Փարիզու, Մանկունք Փէր-Տիւշէնի, Զուաւք, Սրիկայք, Արձակազէնք Մարսէյլեզի, կամաւորք Յուլիսի-Սեան և Վրէժխնդիրք Ֆլուրանի, զորս ժողովուրդը կը կոչէր — ով ժողովուրդ ապերախտ — Վրէժխնդիրք Ֆլուրանսի։

Հ. Մ. Վ. ՆՈՒՐԻԽԱՆ

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Դ — ԺԴ ԴԱՐ

*Երկրորդ տպագրութիւն, յաւելուածովք և փոփոխութեամբք Հեղինակին։*

**Ծանօթ.** — Բազմավէպ Հանդիսարանի բաժանորդաց համար կարևոր **ԱԶԴ** մը տես ներկայ Պրակիս կողքին վրայ։

digitised by A.R.A.R.@